№ 283 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1909
ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզ

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 223.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1910 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(38-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ռ., 10 ամսվանը՝ 9 ռ., 9 ամսվանը՝ 8 ռ., 8 ամսվանը՝ 7 ռ., 7 և 6 ամսվանը՝ 6 ռ., 5 ամսվանը՝ 5 ռ.; 4 ամսվանը՝ 4 ռ., 3 ամսվանը՝ 3 ռ., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և միւնոյն ժամանակ 40 կ. նամակադրոշմ։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիկական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։ Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Адресъ телеграммъ: ТИФЛИСЪ, Редакція «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Դեկտեմբերի 23-ին, առաւօտեան ժամը 11-ին,
Ի ՏԻՐ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ
Մեծ Իշխան
ՄԻԽԱՅԻԼ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉԻ

թաղման օրը Թիֆլիսի Բօրսայի շինութեան մէջ տեղի կունենայ հոգեհանգիստ։ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԱԻԱԳԸ խնդրում է բոլոր վաճառականներին ներկայ գտնվել այդ հոգեհանգստին, իսկ գրանից յետոյ ներկայանալ նաև Ալէքսանդրօ-Նեվսկի զինուորական տաճարում տեղի ունենալիք հոգեհանգստին։

1378. 1—1

ԳՈՒԿԱՍԵԱՆ ԸՆԵՐՈՒԹԻՒՆ
ԴԵՂԱՏԱՆ ՄԲԵՐՔՆԵՐԻ
Ա. ՌԵՒՏՐԻ
ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, ԲԱԹՈՒՄ.

Adresse Télégraphique ANITAS

Адресъ телеграммъ САНИТАСЪ Тифлисъ

Առհագին եւ զանազան տեսակ
ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՏՕՆԱԾԱՌԻ ԶԱՐԴԵՐ
Առաջարկում ենք վաղօրօք ձեռք բերել։
ՅՈՒՅԱՀԱՆԴԷՄՆԵՐԸ
տօնածառի զարդերի՝ սարքված են մեր խանութներում՝ ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ վրա և ՄԻԽԱՅԼՈՎԱՅԻ ՊՐՕՍՊ. վրա № 67.

(առ.) 1278. 0—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ

յայտարարում է, որ դեկտեմբերի 21-ից բացված է Մ. Արամեան անուան պաւիլիօնում մի բաժանմունք՝ միայն ներքին հիւանդութիւններ ունեցող տղամարդկանց համար։ Անդամահատական և կանանց տերապեվտիական բաժանմունքների բացման ժամին կը յայտարարվի մօտ ապագայում։ Ընդհանուր պալատներում բժշկվելու համար ամսական պէտք է վճարել 15 ռ., իսկ արտօնութիւն ունեցողներին՝ առանձին որոշված վճարով։ Զուտեղները ազատվում են դրամական վճարից համաձայն Քաղաքային Վարչութեան հիմնած կանոնների։ (առ.) 1371. 3—2

ԸՆՏՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

I

Եթէ կան մի քանի թանգագին ժառանգութիւններ հայկական կեանքի մէջ, նրանցից մէկը ընտրական սկզբունքն է։

Այդ սկզբունքը կարողացել է դիմանալ միջնադարեան սարսափների, վայրենի հրոսակային արշաւանքների, երկրի տնտեսական և քաղաքական քայքայումների շրջաններում և, իբրև մի ազդաշնչական կարևոր գործօն, հասել մինչև մեր օրերը։

Դա մի սկզբունք է, որը կազմում է հասարակագիտութեան անկիւնաքարը, որը անխորտակելի այժ է տուել անցեալ-սաքսօնական տարրին թէ իր մայր երկրում և թէ նոր աշխարհում, որը դարձել է և դառնում է սեփականութիւն բոլոր լուսաւոր աշխարհի և որի ամեն մի նոր նուաճում նկատվում է իբրև հոմանիշ հիմնական առաջադիմութեան։

Մեր անցեալի դժբաղդ և ձախորդ հանգամանքները շատ անգամ են վտանգել ընտրական սկզբունքը և երբեմն նրան չեզոքացրել, բայց գաղափարը երբէք չէ մեռել և չէ անհետացել։ Եւ հէնց որ ճնշող և խեղդող ազդեցութիւնները թուլացել, են ընտրական սկզբունքը սկսել է նորից իր տեղը բռնել կեանքի մէջ և պայմանաւորել ժողովրդական, հասարակական, ազգային բոլոր ձեռնարկութիւնները։

Վերջին հարիւր տարվայ ընթացքում, երբ հայ ժողովրդի զանազան մասերը ասիական ստացան կարողութիւն ապրել այս կամ այն պետութեան մէջ աւելի ազատով և կանոնաւոր կեանքով, ընտրական սկզբունքը հանդէս եկաւ իր բոլոր պահանջներով և ձգտեց մի կողմից վերականգնեցնել այն, ինչ որ դաժան օրերում կորցրել էր, իսկ միւս կողմից ընդարձակել և կատարելագործել սկզբունքի գործադրութիւնը։

Դժբաղդաբար՝ ընտրական սկզբունքի դէմ երբեմնապէս հանդէս էին գալիս մեղանում նաև ինտելիգենտ դասի ներկայացուցիչներ, և, օրինակ, թէ աշխարհականների և թէ հոգևորականների մի ստուար մասը ամեն ճիգ էր թափում մի ժամանակ սահմանափակել դպրոցական հոգաբարձուների ընտրութեան գործը, նշանակել տեսուչներ, քահանայ հոգաբարձուներ և այլն։

Բայց մխիթարական էր այն, որ օրից օր աճում էր բուն ժողովրդասիրական, առաջադէմ մտածողների և գործողների թիւը, և շնորհիւ նրանց անձնուէր և գաղափարական գործունէութեան այժմ ընդարձակ նուաճումներ է արել ընտրական սկզբունքի գաղափարը մեր հասարակական գիտակցութեան մէջ։

Ինչպէս ամեն մի խոշոր և լայնատարած գործի մէջ, այնպէս էլ ընտրական սկզբունքի իրականացման մէջ եղել են և կան թերութիւններ, զանցառութիւններ և նոյնիսկ գեղծումներ։ Եւ հասարակութիւնը, որ կամենում է բարիքներ ստանալ այնպիսի մի էական զօրաւոր գործօնից, ինչպէս է ընտրական սկզբունքը, պէտք է ամեն ջանք թափէ չը խղելու և չը թուլացնելու իր կապը այդ սկզբունքի հետ և կանոնաւորելու նրա գործադրութիւնը իրական կեանքի մէջ։ Իսկ հասարակութեան արթուն մասը պէտք է մաքառէ այն բոլոր ազդեցութիւնների դէմ, որոնք ձգտում են վտանգել փրկարար սկզբունքը։

Մի որևէ գիւղում կարող են շատ թերի և անկատար կերպով կատարել քահանայի, տանուտէրի և մի ուրիշ պաշտօնեայի ընտրութիւնը։ Բայց դա իրաւունք չէ տալիս խախտելու և վերացնելու սկզբունքը, այլ թելադրում է միայն մի պարտականութիւն—միջոցներ մշակել բարւոքելու համակրելի սկզբունքի գործադրութեան եղանակները։

Մենք վերջին տարիներում մեր կովկասեան և մասնաւորապէս հայկական կեանքում ականատես եղանք շատ անպատեհ դէպքերի ընտրական գործում, մենք սրտի ծանր վշտով արձանագրեցինք թէ Պետական Դումայի պատգամաւորների, թէ մեր հասարակական պաշտօնեաների ընտրութեան ժամանակ վերին աստիճանի տխուր և տգեղ դէպքեր, կեղծիքների և ճնշումների սոսկալի արտայայտութիւններ, բայց երբէք չարինք հեռաւոր ակնարկ անգամ ընտրական սկզբունքի դէմ։

Բողոքեցինք և մաքառեցինք զեղծումների և զանցառութիւնների դէմ, մերկացրինք մի շարք խարդաւանքներ և ճնշումներ ընտրական գործի մէջ, առաջարկեցինք հասարակութեան ուշադրութեանը մեր խորհրդածութիւնները ընտրական գործի վտանգման մասին։

Բայց սկզբունքը մնաց իր հարազատութեան և անձեռնմխելիութեան մէջ։

Շեղումներ, զեղծումներ և զանցառութիւններ ընտրական գործի մէջ կան և Ամերիկայում, և Եւրօպայում, և ռուսական զեմստվօյում. բայց ոչ մի խոհուն մարդ չի վստահանայ ընտրական իրաւունքի խախտման կողմնակից լինել, այլ իր բոլոր կորովը և այժը կուղղի դէպի եղած պակասութիւնների վերացումը և դէպի հասարակական գիտակցութեան ընդարձակումը։

Այդ հասարակական գիտակցութեան համար էինք մենք խօսում, գրում և մաքառում։

Ինքը ընտրական սկզբունքը այնքան վեհ է, սուրբ և հիմնական, որ երբէք չը պէտք է վհատվել նրա ժամանակաւոր թոյլ և զարտուղի արտայայտութիւններից։

Հայի դարաւոր կեանքի այդ մեծ ժառանգութիւնը միշտ էլ կը մնայ իբրև մի լուսաճաճանչ կոթող ժողովրդական ոգու կենսունակ զօրութեան։

Նրան չեն խախտել անցեալում դժոխքի հնարած ամենասոսկալի աղհաւիրքները և այսուհետև էլ ոչ մի փորձութիւն չէ կարող նրանց վտանգել նրան։

Գաղափարը անձեռնմխելի է և այդպէս էլ կը մնայ։

Իսկ նրա գործադրութիւնը կարօտ է բարեփոխութիւնների։

Դա բոլորովին ուրիշ բան է։

Ա. Քալանթար

ՄԵԾ ԻՇԽԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Պետերբուրգ, 19 դեկտեմբերի

Հեռագ. Գործ.-ը շարունակ նորանոր հեռագիրներ է ստանում Ռուսաստանի զանազան քաղաքներից Մեծ Իշխանի համար հոգեհանգիստների մասին։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 19 դեկտեմբերի

Հրատարակվեց Բարձրագոյն հաստատված այն կարգերը, որոնց համաձայն կատարվելու է Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի թաղումը։ (Հ. Գ.)

—

Մոսկվա, 20 դեկտեմբերի

Ցերեկվայ ժամը 3-ի մօտերը կայսերական պաւիլօնին մօտեցաւ Մեծ Իշխանի մարմինը բերող գնացքը։ Կայարանում դրված էր պատուաւոր պահակախումբ Ն. Կ. Բ. Մեծ Իշխանի Տաւրիկեան գրենադերական գնդից՝ դրօշակով և երաժշտախմբով։ Այստեղ գնացքին սպասում էին նահանգապետը, քաղաքապետը, զինուորական և քաղաքացիական իշխանութիւնները, պատական պաշտօնեաները, դասակարգերի ներկայացուցիչները և բազմաթիւ պատգամաւորութիւններ։ Սգի գնացքով եկան մարմին ուղեկցող Մեծ Իշխաններ Նիկոլայ, Գէօրգի, Ալէքսանդր և Սերգէյ Միխայլովիչները, Մեծ Իշխանուհիներ Կսենիա Ալէքսանդրովնան և Մարիա Գէօրգիէվնան։ Գնացքը մօտեցաւ «Կօլ ոլաւէնի» հնչիւնի տակ։ Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչը, դուրս գալով վագոնից, անցաւ պատուաւոր պահակախմբի միջով։ Այնուհետև հոգևորականութիւնը հոգեհանգիստ կատարեց հանգուցեալի դագաղի մօտ։

Ժամը 4 և 10 րոպէին գնացքը մեկնեց Պետերբուրգ։ (Հ. Գ.)

—

Ցարսկոէ-Սէլօ, 20 դեկտեմբերի

Երեկոյեան ժամը 6 և 45 րոպէին իբրև գերմանական կայսրի ներկայացուցիչ՝ եկաւ նրա եղբայր պրինց Հէնրիխը Մեծ Իշխանի թաղմանը ներկայ լինելու համար։

Կայսերական պավիլօնում պրինցը ընդունվեց Կայսրից։ Փոխադարձ ողջոյններից յետոյ պրինցը Նորին Կայսերական Մեծութեան հետ անցաւ պատուաւոր պահակախմբի միջով։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 20 դեկտեմբերի

Ժամը 6 և 50 րոպէին եկաւ Մեծ Իշխանուհի Անաստասիա Միխայլօվնան Օգոստափառ եղբօր՝ Մեծ Իշխան Միխայիլ Միխայլովիչի հետ։ (Հ. Գ.)

—

Թաւրիզ, 20 դեկտեմբերի

Հայոց եկեղեցում, լի աղօթողներով, ռուսական զեներալ հիւպատոսարանի պաշտօնեաների և ռուսաց զօրախմբի ներկայութեամբ, հոգեհանգիստ կատարվեց Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի յիշատակին։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 20 դեկտեմբերի

Ռուսական դեսպանատան եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց Մեծ Իշխանի համար։ Ներկայ էին կոմս Էրենտալ, գերմանական դեսպանը, սերբական և բուլգարական դեսպանները, դեսպանատան պաշտօնեաները։ (Հ. Գ.)

—

Վաղը, դեկտ. 23-ին, Պետերբուրգում կը թաղվի Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչը։ Այդ օրը ամբողջ Ռուսաստանում, ի թիւս այլ քաղաքների նաև Թիֆլիսում, ոչ մի ներկայացում չի լինի թատրոններում, պրոժեկտօրներում, ցիրկում և նման տեղերում։

—

Շուշի, 14 դեկտեմբերի

Ամսիս 13-ին, քաղաքիս Ագուլեաց աւ. եկեղեցում, հանդիսապետութեամբ թեմի առաջնորդի, մասնակցութեամբ քաղաքի ամբողջ քահանայական դասի և ներկայութեամբ ժողովրդի խուռն բազմութեան՝ պատարագից յետոյ կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի յիշատակին։ Պատարագին երգում էր թեմ. դպրանոցի քառաձայն խումբը։ Առաջնորդը հակիրճ խօսքերով բացատրեց հանգուցեալի մատուցած ծառայութիւնները յօգուտ Կովկասի բազմազան ժողովուրդների իր փոխարքայութեան միջոցին։

Հոգեհանգստից յետոյ՝ առաջնորդը ուղարկեց Պետերբուրգ հանգուցեալի անդրանիկ որդի Նիկոլայ Միխայլովիչի հասցէին հետևեալ հեռագիրը։

«Այսօր Շուշու աւ. եկեղեցում կատարեցի հանդիսաւոր հոգեհանգիստ Ձերդ Բարձրութեան ի Տէր հանգուցեալ Օգոստափառ Հօր՝ Կովկասի նախկին ամենասիրելի և անմոռանալի փոխարքայի՝ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի յիշատակին։ Յայտնում եմ հօտիս հետ միասին խորին ցաւակցութիւն և անսահման վշտի զգացմունքներ»։

Ի պատասխան առաջնորդի հեռագրի՝ ստացվեց հետևեալ հեռագիրը։

«Ի բոլոր սրտէ շնորհակալ ենք ձեզանից և ձեր հօտից՝ մեր թանգագին ծնողի վերջին յիշատակութեան համար։ Թող լսէ Տէրը ձեր աղօթքները։ Նիկոլայ Միխայլովիչը ուղեկցում է թանգագին ճաւնին։ Սերգէյ Միխայլովիչ»։ Մայիլ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մոսկվա, 20 դեկտեմբերի

Եկաւ կայսերական գնացքը և 15 րոպէ կանգնելուց յետոյ մեկնեց Պետերբուրգ։ (Հ. Գ.)

—

Ցարսկոէ-Սէլօ, 20 դեկտեմբերի

Կէսօրվայ ժամը 2 և 30 րոպէին բարեհաճեցին ժամանել Նոցին Մեծութիւնները Օգոստափառ Երեխաներով։ Կայարանում դիմաւորեցին Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչը, բարձր պաշտօնեաներ, բարձր զինուորական իշխանութիւններ, նահանգապետը, նահանգական ազնուականութեան պարագլուխը։ Նոցին Մեծութիւնները, բարեւելով հաւաքվածներին, ուրաների ուղեկցութեամբ բարեհաճեցին մեկնել պալատ։ (Հ. Գ.)

—

Մոսկվա, 19 դեկտ.

Բացվեց վիրաբոյժների համառուսական համագումարը։ Ներկայ են 172 պատգամաւորներ։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 19 դեկտ.

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը առաջարկեց ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին 1910—1911 թ. ուսման տարվայ սկզբից համալսարան ընդունելու ժամանակ պահանջել հոգևոր դպրոցներն

աւարտածներից վկայականներ այն մասին, որ նրանք լրացուցիչ քննութիւն են տուել մաթեմատիկայից, ֆիզիկայից, գերմաներէնից և ֆրանսերէնից արական գիմնազիաների ութ-դասեան դասընթացքի չափով։ Այդ տեսակ քննութիւններ կարելի է տալ ոչ միայն դարնանը արական գիմնազիաներին կից, այլ և տարվայ ընթացքում, այն քննիչ մասնաժողովների մէջ, որոնք կազմված կան կրթական շրջանի վարչութեանը կից։ Ժամանակը նշանակում է կրթական-շրջանային իշխանութիւնը։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 19 դեկտեմբերի

Դնդապետ Կարպովի մարդասպանին ձերբակալող նախկին քաղաքական Պալէեվին քաղաքապետը նշանակեց 300 ռուբլի պարգև։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 19 դեկտեմբերի

Վօլկովի գերեզմանատունը թաղվեց պրոֆէսոր Լեսգաֆտ։ Դագաղի վրա դրված էին բազմաթիւ պսակներ։

(Հ. Գ.)

—

Ա.թէնք, 20 դեկտեմբերի

Զինուորական լիգայի նամակին Տէօտոկիսը պատասխանեց, որ պալատն արդէն ընդունել է 163 օրինագծեր։ Նրա կուսակցութիւնը ապագայում ևս ձայն կը տայ այն օրինագծերին, որոնց կառավարութիւնը անհրաժեշտ կը գտնէ։ Այս սկզբունքի խախտումը թերևս վտանգաւոր բարդութիւններ ծնէ։

Բալֆիսը զինուորական լիգային պատասխանեց միևնոյն ոգով։ (Հ. Գ.)

—

Ա.թէնք, 19 դեկտեմբերի

Զինուորական պատգամաւորութիւնը Տէօտոկիսին և Բալֆիսին մի նամակ յանձնեց, որով զինուորական լիգան պնդում է զինուորական և ֆինանսական բարենորոգումների գործադրութեան վրա։ Դեռ պատասխան չէ ստացված։ (Հ. Գ.)

—

Անտիվարի, 19 դեկտեմբերի

Երէկ տեղս հասան ֆրանսիական նաւերը ծովակալ Պիվէի հրամանատարութեամբ։ Փոխադարձ թնդանօթաձգութիւնից յետոյ, ծովակալը և ֆրանսիական դեսպանը փոխադարձ այցելութիւններ կատարեցին։ Իշխանի ադիւտանտն ելաւ ծովակալի նաւը և ողջունեց եկածներին իշխանի անունից։ Ժամը 11-ին ծովակալը իր շքախմբով և ֆրանսիական դեսպանը պաշտօնների հետ գնացին իշխանական պալատը։ Վերջինս ողջունեց հիւրերին։ Դրված էր պատուաւոր պահակախումբ։ Երաժշտախումբը նուագեց մարսէլիոզը։ Բազմամարդ ամբոխը ողջունում էր շարունակ իշխանական ոգին։ ցնծագին ընդունելութիւն ցոյց տուին հիւրերին։ Երեկոյեան կայացաւ շքեղ հացկերոյթ։ Էսկադրան կը մնայ երեք օր։ (Հ. Գ.)

—

Վաշինգտոն, 19 դեկտեմբերի

Ծովային դեպարտամենտը որոշեց բաժանել Խաղաղ-ովկիանոսի այժմեան նաւատորմը երկու ինքնուրոյն ծովային միութիւնների՝ ասիական և Խաղաղ ովկիանոսի նաւատորմեր։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 19 դեկտեմբերի

Այսօր նոր տարվայ առիթով Ֆալիէրն ընդունեց դիպլոմատիական մարմնին։ Սպանական դեսպանը, իբրև աւագագոյնը, և Ֆալիէրը փոխանակեցին ողջոյնի ճառեր։ (Հ. Գ.)

—

Կօպենգ, 20 դեկտեմբերի

Գիշերվայ ժամը 1-ից սկսված հրդեհը մինչև առաւօտ ոչնչացրեց տեղական բազարի կէսը։ Այրվեցին թէյի, շաքարի, գալանտէրէյնի շարքերը։ Վնասները չափազանց խոշոր են։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ.—Կայսերական ռուսաց երաժշտական ընկերութեան կիսադարեան գործունէութիւնը տօնվեց շատ շքեղ կերպով։ Ողջոյններ ստացվեցին աշխարհի բոլոր կողմերից։ Ներկայ էին աւելի քան 70 պատգամաւորութիւններ։ Երեկոյեան տեղի կունենայ յոբելեանական օպերային ներկայացում մասնակցութեամբ Շալեպինի, Սմիրնովի, Երշովի, Տարտակովի, Բօլսկի-Կուզնեցովի, Գլազունովի և ուրիշների։ Վաղը կը լինի համերգ մասնակցութեամբ Գլազունովի, Առենսկի, Օսիպովայի, Վերժբիլովիչի և Երշովի։ Հանդէսը վերջացաւ բանկէտով։ Պատգամաւորութիւններն այսօր հրաւիրվեցին պալատ։

Սպասվում է, որ կայսերական պալատի մինիստր բարօն Ֆրէդերիկսը հրաժարական կը տայ։

Ժողովրդական համալսարանում արդելվեց դասախօսել քաղաքական մնտեսութեան մասին։

Ծօցիալիստ-յեղափոխականների դումայական ֆրակցիան նոր կարևոր նիւթ ձեռք բերեց Կարպովի սպանութեան առիթով։

Շուտով ֆինանսների մինիստր Կոկովցեվը կը մեկնէ արտասահման։ («Ե.»)

—

Գլադստոնի ծննդեան հարիւրամեակի տարեդարձը մեծ հանդիսով տօնվեց ամբողջ Անգլիայում։ Գլադստոնի արձանը զարդարվեց պսակներով Ցունաստանից, Հայաստանից և Իտալիայից։ Բոլգարիան յատուկ պատգամաւորութիւն ուղարկեց թանգագին արծաթէ պսակով։ Աթէնքում Գլադստոնի յիշատակին կազմված հանդէսին ներկայ էր թագաւորը։ («Ր. Բ.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Թէհրան, 19 դեկտեմբերի

Մայրաքաղաքում կպցրել են յայտարարութիւններ այն մասին, որ Բահիմ խանը մեռել է հիւանդութիւնից և Եփրեմը դրաւել է Անարը և Ղարադաղը։ (Հ. Գ.)

—

Թէհրանից հեռագրում են «Рус. Сл.»-ին, որ մէջլիսն ընդունեց մինիստրութեան պրոգրամը, որի մէջ մտցված է օտար խորհրդականներ մտցնելու առաջարկութիւնը։ Լուրերի համեմատ, վճռված է չը հրաւիրել ռուսներին և անգլիացիներին, այլ միայն չեզոք պետութիւններին պատկանող անձանց։

—

Թէհրան.—Մուշտէիդ Ադա Սէյիդ-Աբդուլլա-Բէհբահանիի ցանկութեամբ Նէջէֆի բարձրագոյն հոգևորականները ֆէթվա հրատարակեցին, որով արգելվում է քաղաքական ճառեր արտասանել բոլորին, բացի այն անձերից, որոնց մասնացոյց կանէ հոգևորականութիւնը։ Հրամանագրվում է ցենզուրա սահմանել լրագիրների վրա։

Արդաբիլից հաղորդում են, որ հրացանաձիգ Եփրեմը Սեբաբումն է։

Շարժում է նկատվում շահսէվանների մէջ. սպասվում է ընդհարումն։ Արդաբիլի նահանգապետ Բէշիդ-իւլ-Միւլքը Սեբաբ է գնում ընդհարման առաջն առնելու համար։

(«Ր. Բ.»)

—

Թէհրան, 15 դեկտեմբերի

Բաշտի նահանգում կատարվող կողոպուտների առաջն առնելու համար այնտեղ գնաց Համիդ-իւլ-Սուլթանը զինված ուժերով և զինաթափ է անում գիւղացիներին։ Աղաջանը իր հօրեղբայրի, որի կողոպուտների մասին արդէն հաղորդվել է, անհետացել է։ Պարսից Ասատրա է եկել Աբդաբիլի նահանգապետի օգնականը։ Մանսուր խանը քննում է տեղական կառավարութեան գործերը և կազմակերպում է ոստիկանութիւն։ Ցայտնագործվել են գործերի խառնիճաղանճ դրութիւն և մեծ դժուարների անհաշիւ ծախս։ Ազգաբնակութիւնը հաւատում է, որ Մանսուր խանը կարգը կը վերականգնէ։ («Ր. Բ.»)

ԹԻՒՐԲԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Մեզ դեռ բացակայում են բաւարար և գոհացուցիչ նիւթեր Հիլմի փաշայի գահընկեցի պատճառների վերաբերմամբ, որի մասին հաղորդեց հեռագիրը («Մշակ» № 281)։ Մինչ այդ «Рус. Вѣд.»-ի Վիէննայի թղթակիցը գրում. 15-ից հեռագրում է. «Երիտասարդ-Թիւրքերը պահանջում են Հիլմի փաշայի կաբինէտի հրաժարականը, որովհետև մինիստրութիւնը վիճող քաղաքականութիւն բանեցրեց Եփրատի վրա բանող անգլիական շոգենաւային ընկերութեան գործում և բոլորովին անաջող վարվեց կրետական հարցում»։

—

Բերլինի շրջաններում մեծ անհանգստութիւն է առաջացնում Բաղդադի երկաթուղու կառուցման ժամանակաւոր դադարեցումը։ Որպէս յայտնի է, այդ երկաթուղին 2,200 կիլոմէտր երկարութիւն է ունենալու։ Գերմանական ֆինանսիստները մտածեցին այդ երկաթուղին կառուցանել դեռ 1903 թուին, երբ Թիւրքիայում տիրապետում էր սուլթանական բէժիմը։ Դադարեցման պատճառը անհրաժեշտ դրամագլխի բացակայութիւնն է։ Գերմանական ֆինանսիստների միջոցները բաւականացան միայն 800 կիլոմէտր երկարութեամբ երկաթուղի կառուցանելու համար։ Անցյալում դրութեան մէջ գրված լինելով, գերմանական դիպլոմատիան ըսկսեց նոր մասնակիցներ որոնել այդ անադին ձեռնարկութեան համար։ Համապատասխան առաջարկութիւն արվեց ռուս, անգլիական և ֆրանսիական դրամատէրերին դեռ երկու տարի առաջ։ Ռուս և անգլիացի դրամատէրերը, որպէս յայտնի է, հրաժարվեցին մասնակցել այդ ձեռնարկութեան մէջ, չը կամենալով լայն մուտք տալ գերմանական ազդանքներին Մերձաւոր Արևելքում։ Ինչ վերաբերում է թրանսիական դրամատէրերին, նրանց մասնակցութիւնը այդ գործում շատ չնչին էր, որ չէր կարող նպաստել աշխատանքների արագացման։ Այն ժամանակ գերմանական դիպլոմատիան նորից դիմեց անգլիական դրամատէրերին, առաջարկելով մասնակցել Բաղդադի երկաթուղու կառուցմանը։ Այս անգամ գերմանական դրամատէրերը մերժման չը հանդիպեցին անգլիական դրամատէրերի կողմից, որոնք բանակցութիւնների համար Բերլին ուղարկեցին սըր Էրն Կասսելին։ Վերջինս Բերլինում սիրալիր ընդունելութիւն գտաւ։ Ուստի կարծում են, որ նրա միսիան նպաստաւոր վախճան կունենայ գերմանական ակցիօնէրական ընկերութեան համար, և Բաղդադի երկաթուղու կառուցումը կաւարտվի միրձակայ ապագայում։ («Ր. Ս.»)

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պոլիս, 9 դեկտեմբեր

Կաթոլիկ-հայոց վարչական գործերուն մէջ ոչ նուազ աղմուկներ կան։ Հոմը, Վատիկանի խորքերուն մէջ, զգացած է որ Արևելքը, քաղաքական նոր փոփոխութեանց շնորհիւ, այսուհետև պիտի ապրի ազատ, ու հայերը, անոնք որ ամենքէն աւելի տառապեցան՝ ակամայ՝ զոհեր ըլլալով մասամբ կրօնական երկպառակութեանց, անուշադիր պիտի չեն ձգեր աւելի լայն իդէալներու, ուր դաւանութեանց միտիք հարցեր երկրորդական տեղ կը գրաւեն, և, անդրշիրիմեան ճամբորդութեան համար, չեն փակեր իրենց սիրտը, իրենց հոգին դէպի համազգային գործակցութիւնը։ Հոմը կանխած է միջոցներ ձեռք առնել, որ իրեն հլու, կամարար մաքդամիներներ այժմէն գործի դլուխ անցնին։ Առանցմէ մէկը եղաւ Գոյունեան եպիսկոպոսը, որ այժմ ընտրուած է իբրև տեղապահ։

Երեսփոխ. ընդհ. ժողովի առաջին նիստին մէջ հասած է Զենեթիի միաբան վարդապետներու բողոքագիրը, որով ատոնք դատապէս կը դատապարտեն թէ իրենց մասին պատրիարքարանը ծանր դիտողութիւններ գրած է պապին, որպէս թէ՝ 1) իրենք անիրաւաբար միջամուխ եղած են պատրիարքարանի գործերուն, 2) ժողովուրդին միտքերը կը վրդովեն, 3) Գոյունեանի հակառակ կը շարժին։ Այդ վարդապետները իրենց այդ բողոքի մէջ կը յայտարարեն, թէ իրենք այն ատենը միայն կրնան մասնակցիլ իբրև անդամ ընդհ. ժողովի գործերուն, երբ ժողովը կը հերքէ այդ ամբաստանութիւնները։

Արևելեան առակ է, որ կրսէ՝ «Թերևս տակը վրայէն աւելի լաւ կելլէ». այսպէս՝ անհաւանական չէ կարծել, որ Գոյունեանի պէս ոչխարամիտներ թերևս ամեն բան տակն ու վրայ ընելով՝ բերեն այնպիսի եղրակացութիւններ, որոնք խուտորնակ կերպով համեմատուին իրենց թագուն դիտաւորութեանցը։

Բողոքական հայերը այժմ ոչ մէկ ներքին հարցով կուզեն զբաղել իրենց համար թերևս կը բաւէ համընթաց երթալ ազգին մեծամասնութեան ցաւերուն հետ, բաժանման համար ոչ այլ ինչ ունենալով, եթէ ոչ կիրակնօրեայ աղօթք մը, քարոզ մը։ Ամերիկայի միսիօնարները նոյնպէս կանգ առած կերևին այն ժարդարական թափին մէջ, որ երբեմն վարած էր զիրենք։ Հիմա մեզի հետ խառն՝ կը գործակցին նպատակ յանձնախումբերու, որբախնամներու։

Աբէլեան-Արմէնեան խումբը դարձած է արդէն Պոլիս։ Սուզիա այնքան վշտագին եղանք Աղանայի ցաւերէն ասդին, որ դժուար էր գուշակել թ. հանրութիւնը սիրտ պիտի ունենար թատերական երեկոյներու մէջ բազմութիւն շիտեղ, զբաղիլ գրական, պատմական դէպքերով ու դէպքերով։ Եւ սակայն Աբէլեան յաջողեցաւ, ու հիմա թատրոնը, նախորդ տարուան պէս, կը լեցուի ահագին բազմութիւնով։ Թատերական նիւթերը, այս տարի, աւելի լայն տարածքի վրայ են։ Երկու օր առաջ Աբէլեան խումբը ներկայացուց Զիրիկովի «Հրէաները» Հրէայ տանը մէջ մտած են նոր գաղափարներ, լաւ չմարսուած նոր ըմբռնումներ, և կռիւը ուժգին կերպով կը մղուի Թալմուտի և ռասկավարական հոգի վրայ։ Աբէլեան ահագին ապաւորութիւն կը թողու հրէայ ռանտիրոյ դերին մէջ։

Թատրոնը, մեզի համար, գոնէ այս տարի, անհրաժեշտ պիտէ մնայ է մեր ընկերութեան մէջ վերարտադրելու նոր մտածումներ, նոր զարգացումներ՝ քիչ մը վեր բարձրանալու համար այն ցած, անարդ մտածումներէն ու կիրքերէն, որոնք բուռն կերպով կարծարձեն ազգամիջեան պայքարները։ Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԱՄԵԱՆՑԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ԲԱՑՈՒՄԸ

—

Կիրակի, դեկտ. 20-ին, Թիֆլիսում բացվեց Մ. Արամեանցի նուիրատուութեամբ կարուցված հիւանդանոցը։

Բացման հանդիսին հաւաքված էին բազմաթիւ հանդիսականներ բժիշկներ, քաղաքի ճանաւորներ, մամուլի ներկայացուցիչներ և մասնաւոր հեռաքրքրվողներ։

Հիւանդանոցը մեծ ընդարձակ մի շինութիւն է բժշկական յարմարութիւններով։ Օդն և լոյսն հիւանդանոցում առատ են։

Հիւանդանոցը շինված է Հալաքարում, մօտ՝ քաղաքի այն հիւանդանոցներին, որոնք յատկացված են վարակիչ հիւանդութիւնների համար։

Նոյն տեղում շինվում է և մի մանկական հիւանդանոց Զուբալովի նուիրած դրամով։

Եւ որովհետև քաղաքն այդ կէսում ունի ընդարձակ հող, մօտ 22,000 քառակուսի սաժէն, ուստի կարելի է կառուցանել այդտեղ դարձեալ մի քանի հիւանդանոցներ։

Արամեանցի հիւանդանոցը ամենամօտն է ելեքտրաքարշի գծից և լինելով երեք յարկանի մի խոշոր հոյակապ շինութիւն, աչքի է ընկնում հեռուից։

Հիւանդանոցի ներկայ բացումը պաշտօնական չէր, որովհետև դեռ բոլոր մասերը չեն աւարտված և նրանք մի քանի շաբաթվայ լրացուցիչ աշխատանք են պահանջում։ Իսկ հիւանդներ ընդունելու և իր գործունէութիւնը սկսելու համար նա բոլորովին պատրաստ է։

Բացման հանդէսին նուիրատու Մ. Արամեանցի և բոլոր հաւաքվածների ներկայութեամբ մանրաման բացատրութիւններ էր տալիս սանիտարական վերատեսուչ բժիշկ Կ. Մտեփանեան։ Այդ բացատրութիւններից երևաց, որ հիւանդանոցը ունի 120 հիւանդի համար տեղ և բոլոր այն յարմարութիւնները, որոնք անհրաժեշտ են հիւանդներին խնամելու և բժշկելու համար։ Շինութիւնը այնպէս է յարմարեցված, որ եթէ որևէ պատճառով հարկաւոր համարվի կղզիացնել նրա մի մասը, կարելի է այդ անել առանց որևէ դժուարութիւն պատճառելու միւս մասերին։ Այդ նկատումով սենեակների դասաւորութիւնը վերածված է չորս բաժանմունքի։ Հանդիսականները ծանօթացան նաև հիւանդանոցի ձեռք բերած նոր կատարելագործված անօթների, պատգարակների հետ, որոնք տաս են դիւրութիւններ։

Հիւանդանոցը ունի սեփական էլեկտրական լուսաւորութիւն։

Երբ աւարտվեց հիւանդանոցի շինութեան մանրամասն զննութիւնը՝ հիւրերը հրաւիրվեցին Թէյի և այդտեղ քաղաքագլխի պաշտօնակատար Ա. Խատիսեան արտասանեց մի ընդարձակ ճառ, որի մէջ նա հաղորդեց հիւանդանոցի շինութեան պատմութիւնը, ընդգծեց հիւանդանոցի կատարելիք էական դերը այն իրական մեծ պահանջի դիմաց, որ զգացվում է Թիֆլիսում։

Հիւրերը շնորհաւորեցին թէ նուիրատուին և թէ քաղաքային ինքնավարութեան ներկայացուցիչներին նոր բուժարանի աւելացման առիթով և զոհ սրտով ցրվեցին իրանց տները։ Ք.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

—

Նոր-Բայազէտ, 16 դեկտ.

Որովհետև մեր քաղ. վարչութեան անդամների ընտրութեան ժամանակը մօտենում է, այդ պատճառով զանազան տարբ մարդիկ իրանց մութ նպատակներով սկսել են վարչ. անդամների հասցէին զրպարտութիւններ ուղղել և ժողովրդի միտքը պղտորել։

Մենք չենք ասում, որ մեր քաղ. վարչութեան անդամներն անխտիր բոլորը անաչառ ու շիտակ մարդիկ են, չենք ասում նոյնպէս, որ նրանցում չը կան քաղաքային գործերին անփոյթ, թեթև կերպով վերաբերվողներ։ Բայց կասենք և այն, որ կան վարչ. անդամների թուում նաև այնպիսիներ, որոնք անկեղծօրէն աւելի բարձր են դասում հասարակութեան շահերը, քան իրանց սեփականը, և աւելի տոգորված են ժող. ծառայելու դիտաւորութեամբ։ Եւ աւելի ցաւալին այն է, որ վերը յիշածս այդ տարբ անձինք իրանց շահերն ի նկատի ունենալով և զանազան ծուռ նկատումներով ջանք են անում անուանարկել, զրպարտել քաղ. վարչ. հենց այդ բարեխիղճ անդամներին։

Սակայն հասարակութեան գիտակից մասը լաւ է հասկանում. նա իր հինգ մատների պէս ճանաչում է իր գործողներին, իր անդամներին։ Որսորդ

—

Գոմաձոր (Նոր-Բայազէտի գ.), 10 դեկտ.

Ահա հինգերորդ տարին է, ինչ գիւղումս գոյութիւն ունի տիզասեան դպրոց, որը բացված է հասարակութեան համախոհականով։ Դպրոցի բացումից մինչև այսօր տեղացի մի խումբ չկամներ աշխատում են, ինչ էլ որ լինի, փակել տալ դպրոցը, որպէսզի ազատվին դպրոցական չնչին տուրքից, որը ընդունել են ինքնակամօրէն։ Բայց շնորհիւ ուսուցչի եռանդուն և տոկուն դիմադրութեան, այդ մութ ոյժերը մինչև այսօր չեն կարողանում հասնել իրանց փափագին։ Գիւղական հասարակութեան խելացնոր մասը, թէև թուով խիստ սակաւ, գիտակցում է ուսուցչի շինարար ու լուսաւոր գործը և սրանց նրա կողմն է։ Հենց այդ ուսուցչի յորդորների շնորհիւ է ժամանակին բացվել դպրոցը։ Զէզոք

—

Դիլբ (Գօրիի գաւ.), 14 դեկտեմբերի

Ահա 3—4 տարի է, ինչ մեր գիւղը մի անտանելի ցաւով է բռնվել, և, չը նայած գիւղացիների բոլոր ջանքերին, ցաւը մը-տադիր չէ գիւղի օձիքը ձեռքից բաց թողնել։ Բանն այն է, որ մեր ծխատէր քահանան, որ 3—4 տարի է, ինչ հոլուում է մեզ, վերջերումս ուղղակի կրակ ու պատուհաս է դարձել և բարոյականութեան տեսակէտից վատ օրինակ է ծառայում մեր վիրախօս շինականներին, որոնց ընտանեկան սրբութիւնն էլ չէ խնայում։ Այս առիթով մի քանի անգամ գանգատներ են տրված Ցխինվալի գործակալին, Գօրիի հոգ. կառավարութեանը, Զրաստանի և Իմերէթի թեմի կօնսիստօրիային, նոյն իսկ սինոդին, բայց, ինչպէս երևում է, հոգ. իշխանութիւնը չէ ուզում այս գործի առիթով մատը մատին խփել։ Այս քանի օրերս մեր գիւղական համայնքը պատրաստվում է վերջին անգամ մի դիմումն անել թեմ. իշխանութեանը, խնդրելով որ այդ քահանան հեռացվի մեր շրջանից։ Ամբողջ Դիլբի համայնքը այն աստիճան գրգռված է քահանայի ապօրէնի ու անբարոյական գործողութիւնների դէմ, որ եթէ հոգ. իշխանութիւնը գործը նորից ձգձգելու լինի, կարող է յետագայում շատ տխուր հետեւանքների հանել, և նոյն իսկ կարող է մարդասպանութիւն պատահել։

Ուսուցիչ Վ.

—

Ղամարլու, 9 դեկտեմբերի

Այս տարի Ղամարլուի ծխ. դպրոցը շատ ուշ բացվեց։ Ղամարլուն, լինելով Դաւնիբասար շրջանի ամենաաչքի ընկնող տեղը, պէտք է ունենար նախանձելի դպրոց, բայց ընդհակառակն ենք տեսնում։ Չը նայելով որ Ղամարլուն ունի աչքի ընկնող ոյժեր, որոնք իսկապէս կարող են զարկ տալ դպրոցական գործին, բայց այդ ոյժերը մոլորված են զանազան թայֆայական գործերով, ուշադրութիւն չեն դարձնում, և այդպիսի դպրոցը Ղամարլուի պէս տեղում օրըստօրէ յետ է գնում, ու մանուկ սերնդի դաստիարակութիւնը, շնորհիւ ազգատ հոգաբարձուների և ազգատ ուսուցիչների, մնում է թերի։ Անցեալ տարվայ տխուր դէպքերը, ուսուցիչների և հոգաբարձուների անպէտք լինելը բոլորովին զզուեցրել էին ժողովրդին։ Եւ հենց այդ էր պատճառը, որ այս տարի ուշ է բացվում դպրոցը։ Ղամարլուի շրջանը, որ մի ժամանակ ունէր 20-ի չափ դպրոցներ, այժմ ունի միմիայն երեքը։ Այս տարի հոգաբարձական ընտրութիւնները չը տուին աւելի բաւական արդիւնք, քան նախորդ տարիները։ Նոր հոգաբարձուները իրանց նախորդներից աւելի անձեռնտու են և հրաւիրում են իրանց նման ուսուցիչներ։ Եւ այդպէս՝ 110 աշակերտ-աշակերտուհիների դաստիարակութեան գործը դարձեալ մնում է անկարող ձեռքերում։

Լևոն

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

—

Նկատելի կերպով սկսել է ընկնել հայկական երեկոյթների նախկին հմայքը և ժողովրդականութիւնը...

Բուն հայկական երեկոյթների փոխարէն, որոնք տարբվում էին դեռ նորերս, զուտ ազգային բնաւորութեամբ, այժմ սկսել են կազմվել երեկոյթներ, որոնք թիւրիմացութեամբ կրում են «հայկական» անունը։

Հայկական վերջին երեկոյթի տարբողները նեղութիւն չեն կրել մինչև անգամ կօնցերտի պրոգրամի մէջ մտցնելու մի քանի հայկական երգեր, որպէսզի գոնէ դրանով արդարացնեն երեկոյթի անունը։

Ի դէպ կը նկատենք, որ վերջին հայկական երեկոյթի կօնցերտային պրոգրամը շատ միակերպ և անհետաքրքրական էր կազմված։ Հրաւիրված արտիստների անունները մի տեսակ պատահական ընտրութեան բնաւորութիւն էին կրում, յարուցանելով հասարակութեան տարակուսանքը։

Որպէս նորմուծութիւն, վերջին հայկական երեկոյթի կազմակերպողները սարքել էին «Կարաբէտ»՝ Կովկասի անկիւնում», ուր ծախվում էին կովկասեան գինի և շամպայն։

Այդ «Կարաբէտում» ծառայում էին օրիորդներ հայ հասարակութիւնից՝ օրիորդ Սէֆէրեան, Տէր-Կարապետեան քոյրերը, Երամիշեան քոյրերը, Քանանեան և Դէորգեան։ Գեղեցիկ պարզ զգեստներով հիւրասիրում էին հիւրերին։ Դա էր միակ պայծառ բիծը ամբողջ երեկոյթի մէջ, Մնացած բոլորը «Կարաբէտում» անախորժ տպաւորութիւն գործեց։

Դահլիճներում, ուր երբեմն լսվում էին ազգային «Զէյթունի մարշի» և հայկական «Մեր հայրենիք» և «Մայր Արաքսի» ազգային երգերի հնչիւնները,—այժմ թնդում էին մաչիշի և պարագայի էգզոտիկան եղանակները։

Հասարակութեան մէջ աչքի էին ընկնում շատ հարուստ, գեղեցիկ զգեստներ, որոնցից կը յիշենք՝ տիկին Վ. Մ. Տարասովին, պ. Տարասովին, Տ. Ադամովին, Ա. Պանիշինին, Ն. Շարշրովին, Մ. Գէորգովին, Ա. Պոպովին։

Պրոգրամներ ծախում էին տ. Ե. Զիվէլէկեան (սիրուն սև զգեստ) և Մելիք-Բէգլարեան։

Ծաղիկներ ծախում էին օր. Շարշրովին սիրուն փայլուն զգեստներով։ («Ր. Ս.»)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը դեկտեմբերի 19-ի երեկոյեան մեկնեց Գանձակի նահանգը որսի։

1911 թ. լրանում է 100 տարին այն օրից, ինչ սինոդի որոշմամբ և բարձրագոյն հրամանով Վրաստանում վերացվեց Վրաստանի կաթողիկոսութիւնը (որը 14 դար գոյութիւն է ունեցել) և դրա փոխարէն հաստատվեց էկզարխութիւնը։ Այժմ վրացի գործիչների շրջանում միտք է յղացել կազմել երանց եկեղեցու պատմութիւնը, բաժանված 2 մասի. ա) սկզբից մինչև վրաց եկեղեցու անկախութեան դադարումը և բ) վերջին 100 տարվայ վրաց եկեղեցու էկզարխութեան շրջանը։ Այս աշխատութիւնը լոյս կը տեսնի 1911 թուին։

Այսօր Թիֆլիսի արքունական թատրոնում տեղի կունենայ օդագնացութեան յայտնի տեղական Ա. Զլօբինսկիի դասախօսութիւնը օդագնացութեան մասին։ Այս դասախօսութեան հետաքրքրութիւնը աւելանում է նրանով, որ Ֆրանսիական, թիւրքական և ռուսական կառավարութիւնները բանակցութիւններ են վարում Զլօբինսկիի հետ՝ ձեռք բերելու նրանից նրա յօրինած բոլորովին նոր տեսակի օդանաւը, որ տարբերվում է միւսներից նրանով, որ նա գօնդոլներ չունի և նաւատեղները գտնվում են օդանաւի մէջը։ Ասեն մի բանից յետոյ դասախօսը կը պատասխանէ հասարակութեան գանազան հարցերին։ Անձամբ ծանօթ լինելով Բլէրիօյի, Դէլագրանժէի և ուրիշ յայտնի օդագնացների հետ, դասախօսը կը հաղորդէ իր ստացած տպաւորութիւնները։ Աշակերտների համար տոմսակները էժանացված են։

Թիֆլիս է վերադարձել իր կատարած շրջագայութիւնից, գաւառական ուսման գործի հետ մանրամասն ծանօթանալուց յետոյ, կ. Հ. Բ. Ընկերութեան միջոցով բարեգործ անձանց նպաստներից օգտվող դպրոցների ընդհանուր տեսուչ Եր. Լալայեան։ Լալայեան մտադիր է մի ընդարձակ զեկուցում ներկայացնել խորհրդին յիշեալ դպրոցների վերին աստիճանի անմխիթար վիճակի մասին, կցելով իր առաջարկութիւնները դպրոցական գործը նոր հիմքերի վրա դնելու նկատմամբ։

Կիրակի, դեկտ. 20-ին տեղի ունեցաւ երդուեալ-հաւատարմատար Նիկոլայ Քալանթարեանի թաղումը, որ գրաւել էր ինտելիգենտ հասարակութեան ահագին բազմութիւն։ Աչքի էին ընկնում գլխաւորապէս իրաւագէտները և փաստաբանները ոչ միայն հայ, այլ և ռուս, վրացի և թուրք հասարակութիւններից։ Դագաղի վրա դրված էին բազմաթիւ պսակներ յարգողներից և ընկերակիցներից։ Արարողութիւնը կատարվեց Մողնու եկեղեցում։ Պատարագիչն էր Գարեգին արքեպիսկոպոսը։ Թաղումը տեղի ունեցաւ Վերայի գերեզմանատունը։

Անցեալ տարիների օրինակով, պօստհեռագրական գլխաւոր վարչութեան թոյլտուութեամբ դեկտեմբերի 20-ից Քրիստոսի Ծննդեան և Նոր-տարվայ առիթով բացված է շնորհաւորական հեռագիրների ընդունելութիւն։ Այդ տեսակ հեռագիրների մէջ հասցէից առաջ պէտք է գրել «Ծննդեան» կամ «Նոր-տարվայ»։ Շնորհաւորական հեռագիրները կը հասցվին իրանց տեղերը—Ծննդեանները՝ դեկտ. 25-ի առ. ժամը 8-ին, իսկ Նոր-տարվանները՝ 1910 թ. յունվ. 1-ին, նոյնպէս առ. ժամը 8-ին։

Կ. Հ. Բ. Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը կիրակի օրը չը կարողացաւ կայանալ այն պատճառով, որ եկել էին ընդամենը անդամներից երկու-երեք հոգի. նոյն. իսկ բացակայ էին խորհրդի անդամներից մի քանիսը։

Արտիստ Արաքսեանի նախաձեռնութեամբ կազմուելիք համերգը Կ. Հ. Բ. Ընկերութեան շինութեան դահլիճում տեղի չունեցաւ շաբաթ օրը, դեկտ. 19-ին։

Սարատովի Նորաբաց համալսարանում, որի հիմնարկութիւնը ամսիս 6-ին տօնվեց մեծ հանդէսով, ուսանում են միայն 100 հոգի։ Կասկած չը կայ, որ եթէ Թիֆլիսին բաղդ վիճակվեր ունենալ սեփական համալսարան, նրա մէջ առաջին անգամից անհամեմատ շատ ուսանողներ կը լինէին։

Ստացանք «Գուտտենբերգ» (Գ. Դաղստեանի) գրավաճառանոցի մի նոր հրատարակութիւնը (№ 40)—Մովսէս Խորենացու հայոց պատմութիւնը, գրաբար։ Տպված է Թիֆլիսում, գինն է 1 ր.։

Դեկտ. 19-ի երեկոյեան կայացաւ Ժողովրդ. համալսարանի վարչութեան արտակարգ ժողովը։ Ժողովը որոշեց. 1) Անվիջապէս սկսել ընկերութեան 1908—09 տարիների գործունէութեան հաշուետուութիւնը և յունվարից յետոյ հրաւիրել ընդհ. ժողով՝ հաշիւը ներկայացնելու։ 2) Մերժել օսերի երկրորդ ուսումնարան բանալու խնդիրը, փող չունենալու և այլ արդարացի պատճառով։ 3) Տեղային լեզուներով ժողովրդական համալսարանում դասախօսութիւններ կարդալու իրաւունք ստանալու համար ժողովը ընտրեց մի պատգամաւորութիւն, որը պէտք է ներկայանայ գեներալ-նահանգապետին այդ մասին խնդրելու։ ընտրված են վարչութեան անդամներ՝ Վ. Բցխելաձէ, Հ. Առաքելեան և Ե. Ֆէօդորով։ 4) Առաջիկայ ասներից յետոյ ժող. ասանը կազմակերպել յօգուտ ընկերութեան մի զբօսանք։ 5) Կրկին անգամ խնդրել ժող. ընթերցանութիւններ կազմակերպող ընկեր. վարչութիւնից, որ նա իրաւունք ստայ վրաց սեկցիային Աճալեան թատրոնում ներկայացումներ տալու։ 6) Ամսիս 23-ից ասների պատճառով արձակել Ժողովրդ. համալս. ուսումնարանները մինչև յունվարի 7-ը։

Դեկտ. 18-ի գիշերը պրիստաւ Բաֆիբէկովը ձերբակալել է Գանձակի նահանգում յայտնի աւազակ Սարը-Սամէդին։

Բազում առաջիկայ տարվանից լոյս է տեսնելու Թուրքերէն՝ Ուզէյր-բէկ Աբդուլ-Հուսէյն-օղլի Հաջիբէկովի խմբագրութեամբ նոր լրագիր՝ «Թարակքի» անունով։

Կ. Կոստանեան հրատարակել է Ալէքսանդրօպոլում «Գրիգոր Մագիստրոսի խղճերը». գինն է 2 ռուբլի։

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յանձնարարել է քիմիական լաբորատորիային քննել Հալաբարի Դաշա կոչված տեղի լճի ջուրը՝ նրա պիտանի լինելը որոշելու նպատակով։

Վրացիք հիմնում են ազգային թանգարան, իրանց անցեալի բեկորներն ու հնութիւնները ամփոփելու. գործի գլուխ է կանգնել Վ. Դրագ. Տարածող Ընկ.-ը։ Այդ նպատակի համար ունեն 45—50,000 ր.։

Թիֆլիսի վրաց ազնվականների պարագլուխների և ներկայացուցիչների ժողովը գինովաճառ «Կախէթիա» ընկերութեանը տուել է 50,000 ր. նպաստ։

Դեկտ. 26-ին կայանալու է Ուսուցչ. Միութեան ընդհ. ժողովը, որտեղ կը քննվի և կը հաստատվի 1910 թուականի նախահաշիւը։

Թիֆլիսի կրուժօկի աւագների խորհուրդը, ինչպէս յայտնի է, բանակցութիւններ սկսեց գ.-ժ. Դորդանանի հետ գեներալի հողը գնելու վերաբերութեամբ կրուժօկի ձմերային և ամարային շինութիւններ կառուցանելու համար։ Այդ կալուածքը գնահատվում է 80,000 ր. և գտնվում է Վերայի վերելքի վրա։ Ներկայումս աւագների խորհուրդը պատրաստում է ապագայ շինութեան նախագիծը և ծախքերի նախահաշիւը։

Քաղաքի հաշուով պահվող դպրոցների կարիքաւոր աշակերտներին օգնող ընկերութեան կոմիտէը որոշել է օգնութիւն հասցնել յիշեալ դպրոցների 626 ամենաաղքատ ռաներին հագուստեղէն և կօշկեղէն ձեռք բերելով։ Բացի դրանից, որոշված է այդ դպրոցներում գալիք տարվայ սկզբից աւելացնել թոշակաւորների թիւը։

Քանդակագործ Միքայէլեանը, ի յաւերժացումն Թիֆլիսում քաղաքային ինքնավարութիւն մտցնելու 35-ամեակի, առաջարկում է հաստատել քաղաքային պատկերների սրահ։

Կովկասի Փոխարքան թոյլատրել է խաղալ Կովկասի բեմերի վրա օպերեն «Նախ մեռան, յետոյ ամուսնացան» կոմեդիան։

Վրաստանի նոր նշանակված էկզարխ Ինոկենտի արքեպիսկոպոսը կը գայ իր պաշտօնին յունվարի էկսերին։

Վրաստանի էկզարխ Ինոկենտի արքեպիսկոպոսը հետևեալ հեռագիրն է յղել Թիֆլիսի թեմի վրաց քահանաների համագումարին, որ ներկայումս նիստեր է գումարում Թիֆլիսում. «Անկեղծ շնորհակալ եմ հոգևորականութեան համագումարից՝ ողջոյնի համար։ Խնդրում եմ ընդունել ինձ ձեր մէջ իբրև աշխատող յօգուտ թեմի։ Կը դամ ձեզ մօտ Քրիստոսի խաղաղութեամբ և սիրով. պատրաստ եմ իմ ոյժերս նուիրել Իվերիայի եկեղեցու գործերի կանոնաւորմանը և ձեզ հետ միասին հոգալ նրա հոգևորականութեան օգտի համար։ Ուղարկում եմ հայր պատգամաւորներին իմ օրհնութիւնը։ Ապրէք երկար տարիներ. մրավալ ժամէրէ»։

Դեկտեմբերի 14-ից Թիֆլիսում սկսվեցին վրաց հոգևորականութեան թեմ. ժողովները. ժողովին ժամանակում է 44 պատգամաւոր։ Նիստերը դռնփակ են. ժամուկի ներկայացուցիչներին էլ չեն թոյլ տալիս ներկայ լինել։ ոստիկանութիւնը կանգնած է մուտքի առաջ։ Ժողովներում ի միջի այլոց շօշափվում են կարևոր հարցեր։

Ալեքսանդրօպոլի «Ախուրեան» թերթում կարդում ենք. «Ինչպէս լսում ենք, մի խումբ ժարդիկ երէկ խորհրդակցութիւն են ունեցել քաղաքիս և գաւառի գիւղատնտեսական կրթիքների նկատմամբ և որոշել են մի պատգամաւորութիւն ուղարկել Թիֆլիս յայտնի բարեգործ Ալէքսանդր Մանթաշեանի մօտ՝ խնդրելու, որ նա իր մտաբրած գիւղատնտեսական դպրոցը բաց անէ բազմակարօտ հայաբնակ Շիրակի կենտրոնում, Ալէքսանդրօպոլում։ Պատգամաւորութեանը կը միանայ Թիֆլիսում բնաժշկապետ Աւետիք Բաբայեանը։ Պատգամաւորներ են ընտրված բացի բժ. Բաբայեանից՝ Ս. Մուրայեանցից (Ատրպետ) և Կ. Կոստանեանց։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ

—

5-րդ քաղաքամասի պրիստաւ Դաշկովը, որ վերջերս վիրաւորվել էր ազգրից Օրբելիանօվսկ. փողոցում պատահած հրացանագութեան ժամանակ, առողջացել և ստանձնել է իր պարտականութիւնները։

Դեկտ. 19-ին, 5-դ քաղաքամասի ոստիկանութիւնը զինուորապահակների օգնութեամբ շուրջկալ կատարեց և ձերբակալեց 17 անզգոյշ և անանցագրողներ մարդկանց։

Դեկտ. 20-ին, առ. ժամը 8-ին, յանկարծամահ եղաւ հրդեհաշէջ Տերէնտի Միքայէլեանցը։

Դեկտ. 20-ին ոստիկանական պաշտօնեաները ձերբակալեցին գեներալ-նահանգապետութեան սահմաններից աքսորված թիֆլիսեցի եղբայրներ Դաւիթ և Իօսիֆ Բերիձէներին։ Երկուսն էլ պատասխանատուութեան են ենթարկվում քրէական պատժ. 63-րդ յօդուածով։

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

—

Զնքուշից Կ. Պօլսի հայոց պատրիարքարանին հասած պաշտօնական մի հեռագրից երևում է, որ կատարած առաջացնելու դիտաւորութեամբ Զնքուշ են գնացել Գիւլլի-բէյ, Զիա, Էշրաֆ և Ահմէդ Պետերեան աշիրէթները։ Դրանց Զնքուշ ուղարկողն է դիարբէքիրցի յայտնի բէկցիօներ և փախըստական Նիազին։ Յիշեալ աշիրէթները, Զնքուշ հասնելով, ոչնչացրել են Յարութիւն Օհանեան անուն մի անձի, ինչպէս և 25 հոգի՝ իսլամ և ոչ-իսլամ։ Մարդասպանները կողոպտել են և տեղական հայերի վանքը։ Յիշեալ չարագործներից ձերբակալվել է միայն Ահմէդ Պետերեանը։ Այդ աշիրէթները, որոնցից իւրաքանչիւրը ահագին հարստութիւնների տէր է, պարապում են գլխաւորապէս պրօվօկատօրական գործերով։ Եւ, ինչպէս ասվում է պատրիարքարանին հասած հեռագրում, եթէ չարագործներն անպատիժ մնան, ապա պէտք է հաւատացած լինել, որ 1500 տնից բաղկացած մի համայնք հաժեմատաբար մօտիկ ապագայում կորստի պիտի մատնվի յիշեալ աշիրէթների կողմից։ Այս հեռագիրը, որին ստորագրել են Զնքուշի հայերի առաջնորդական տեղապահ Եղբաս վ., հայ-կաթոլիկների առաջնորդ Անտոն վ. և հայ բողոքականների կրօնական պետ Արմենակ էֆ., ներկայացված է օսմ. ներքին գործերի մինիստր Թալէաթ-բէյին։

Ադանայի վալին վերջերս իր մօտ է հրաւիրել Ադանայի ու ըղձակայքի հայ ազգակատէրերին և յորդորել է նրանց որևէ բանից չը վախենալ և վերսկսել իրանց աշխատանքները։ Հրկիզված ագարակների տէրերին, որոնք նիւթական կարողութիւնից զուրկ են, օսմ. բանկի տեղական մասնաճիւղը վարկ է բաց թողնում տարեկան 6%-ով և կառավարութեան երաշխաւորութեամբ։

Դեկտեմբերի 4-ին, Կ. Պօլսի ազգ. պատրիարքարանում խառն ժողովը նիստ է ունեցել, որին հրաւիրվել են Երուսաղէմի պատրիարքական տեղապահ Դանիէլ վ. Յակոբեան և երեսփոխանական ու խառն ժողովի կողմից պատգամաւոր նշանակված Պարգև Փափազեան։ Խառն ժողովը վճռել է պատ. տեղապահին ու պատգամաւորին գործելու լիազօրութիւն տալ իրանց պաշտօնում, առանց ամեն անգամ առանձին խնդրի համար Կ. Պօլիս դիմելու և ազգ. վարչութիւնից թոյլատրութեան սպասելու, որպիսի գործելակերպն ունի իր օրոշ անյարմարութիւնները մանաւանդ այնպիսի պարագաներում, ուր հարկաւոր է կտրուկ միջոցների դիմել՝ որևէ չարիք արմատախիլ անելու համար։ Դանիէլ վ. Յակոբեան և Պ. Փափազեան դեկտ. 9-ին արդէն ճանապարհվել են իրանց նոր պաշտօնատեղին։ Ի միջի այլոց, այդ ժողովում որոշվել է Դանիէլ վարդապետին եպիսկոպոսական վիկարական տալ։

Խառն ժողովը Մերուժան վ. Արշակունուն հաստատել է Արաբկիրի առաջնորդութեան պաշտօնում, համաձայն Արաբկիրի գաւառ. ընդհ. ժողովի ընտրութեան։

Զմիւռնիայի գաւառ. վարչութիւնը դիմել է Կ. Պօլսի ազգ. պատրիարքարանին և խնդրել, որ սա առաջնորդական մի տեղապահ ուղարկի Զմիւռնիա։ Խառն ժողովը, ի նկատի առնելով յիշեալ դիմումը, Արսէն վ. Վահունուն նշանակել է այդ պաշտօնին՝ մինչև նոր կարգադրութիւն։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

Մօսկվայի քաղաքապետի հրամանով «Рус. Слово»-ի խմբագիրը տուգանված է 500 ր., թերթի № 286-ի մէջ «Պետրօվ-Վօդկինսկի» յօդուածի համար։

Երեխաների մահացողութեան գէմ կուռ ընկերութիւնը Մօսկվայում բազմաթիւ հացմունքներ է ստանում այլ քաղաքներից (Կիևից, Օդեսայից, Կազանից), թէ արդեօք բաց չի՞ անի ընկերութիւնը այդ քաղաքներում իր բաժանմունքները և կամ չի՞ ուղարկի դասախօսներ՝ կազմակերպելու Մօսկվայում կարդացվածի նման դասախօսութիւններ։

Ներքին Ռուսաստանում, ամենուրեք, ուր մուցված է զեմստվոյական կանոնադրութիւն, այս ամսվայ ընթացքում տեղի ունեն նահանգական զեմստվոների նիստերը։ Ներկայ Նստաշրջանում ամենից շատ ուշադրութիւն է դարձված երկու հարցերի վրա. ազգաբնակչական օսմնութեան գործին՝ գիւղացիների վերաբերմամբ և ժողովրդական լուսաւորութեան գործին։ Կայացած ընտրութիւններում անցնում են մեծ մասամբ առաջադիմական թեկնածուներ։

Վիլնայում, սկսած դեկտեմբերի 15-ից, դատաստանական պալատը քննում է «նոր վիլնայական հանրապետութեան» վերաբերեալ գործը։ Մեղադրվողները 13 հոգի են. նիստերը լինելու են դռնփակ և դատավարութիւնը տևելու է մի քանի օր։

Զերնիգովի նահանգի մի քանի գաւառական զեմստվոներ բացում են ժամանակաւոր դասընթացքներ գիւղացիների համար, կանեփա-ջուլհակային արհեստ սովորեցնելու։

Վիլնայում փինխարութեան թոյլատրութեամբ ամսիս վերջին կայանալու է հրէական կանանց ուսումնարանների ներկայացուցիչների հանդիսությունը։

Պետերբուրգի Ազատ-Տնտեսագիտական Ընկերութիւնը ամսիս 15-ի նիստում միաձայն պատուաւոր անդամ է ընտրել պրոֆեսոր տնտեսագէտ-վիճակագրող Ա. Ֆօրտունատովին, որի 25-ամեայ գիտական յօբելեանը նոյեմբերի 21-ին տօնվեց մեծ շուքով Մօսկվայում։ Ի պատիւ նոր պատուաւոր անդամի ճառեր են ասել Դ. Բիխաերը, Ս. Պրօկոպովիչը, Ա. Կոտելնիկովը, ընտրելով Ա. Ֆ. Ֆօրտունատովին որպէս գիտնականի և հասարակական գործիչի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԷՆԴԷԼՍՕՆ

Որպէս հեռագիրը հաղորդեց, Դրէզդէնում յանկարծամահ եղաւ յայտնի բանկիր Մէնդէլսօն։ Ահա մի քանի կենսագրական տեղեկութիւններ նրա մասին։

Էրնստ Ֆօն-Մէնդէլսօն-Բարթոլդի, գերմանական ամենախոշոր բանկային տներից մէկի գլուխը, յանկարծամահ եղաւ 63 տարեկան հասակում Դրէզդէնում, ուր նա եկել էր Բերլինից տօներն անցկացնելու համար իր աղջկայ ընտանիքում։ Որպէս յայտնի է, Մէնդէլսօնի բանկային տունը արտասահմանեան այն բանկերի կոնսորցիումի գլուխ է կանգնած, որոնք սովորաբար միջնորդ են հանդիսանում ռուսական փոխառութիւնները կապելու ժամանակ արտասահմանում։

Մէնդէլսօնի բանկը գոյութիւն ունի արդէն աւելի քան մի դար։ Այդ բանկը 1805 թ-ին հիմնել են յայտնի գերմանա-հրէական փիլիսոփայ Մովսէս Մէնդէլսօնի երկու զաւակները՝ Յովսէփ և Աբրահամ Մէնդէլսօնները, Համբուրգում, որտեղից, սակայն, մի քանի տարուց յետոյ բանկը փոխադրվեց Բերլին։ Նոր վախճանված Էրնստ Ֆօն-Մէնդէլսօն-Բարթոլդին այդ եղբայրներից մէկի թոռը և յայտնի կօմպոզիտոր Մէնդէլսօն-Բարթոլդիի եղբօր որդին էր։ Վերջին երկու տարիների ընթացքում հիւանդութեան պատճառով նա դադարեց զբաղվելուց բանկի գործերով, որը նա կառավարում էր 40 տարի շարունակ։ Ներկայումս Մէնդէլսօնի բանկային տան տէրերը հանդիսանում են Մէնդէլսօնի ընտանիքի երեք անդամները և այդ բանկի նախկին գլխաւոր հաւատարմատար Ֆիշէլ։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Վան, 9 դեկտեմբերի

Երեք ամսից անց է, ինչ Վանի առաջնորդական ընտրութիւնը հերթական հարց է դառել, բայց լուծում չէ գտնում և չի էլ գտնի։ Գաւառ. երեսփոխանական ժողովը, որ պիտի կատարէ այդ ընտրութիւնը, հինգ անգամ հրաւիրվեց նիստ գումարելու, բայց մեծամասնութիւն չունեցաւ, ուստի չը կարողացաւ զբաղվել այդ հարցով, որ մնում է չը վճռված։

Երեսփոխանական ժողովը կազմվում է 49 անդամներից, որոնցից 34-ը միայն ընտրվել են, իսկ որոնցից էլ 9-ը հրաժարվել կամ բացակայում են և մնում են 25-ը միայն. ժողովի նախագահը—Ղևոնդ Խանջեան—ընտրվեց ոստիկանութեան կամքով, իսկ անդամներից երկուքն էլ ոստիկան. այդ պատճառով էլ ոստիկանութեան պետի հրամանով հրաժարվեցին ազգային պաշտօններից, և սա շատ կարգին էր, որովհետև մի ազգային ժողով, որպիսին է երեսփոխանական ժողովը, ոստիկանների ժողով չէ։

Ամբողջ երեք ամիս երեսփոխ. ժողովը չը կարողանալով զբաղվել և զբաղվել իր հերթական հարցերով, որոնցից ամենակարևորն է առաջնորդ. ընտրութեան հարցը, կորցնում է բուն իսկ իր գոյութեան իրաւունքը, և ժողովի գոյութեան հարցն իսկ դառնում է հերթական։

Իսկ առաջնորդ. ընտրութեան խնդիրը անպայման յետաձգվում է, որովհետև ոչ միայն երեսփոխ. ժողովը կորցրել է իր գոյութեան իրաւունքը, այլ և ընտրելի եկեղեցական հայրերն էլ հրաժարվում են ընտրվելուց. երկու անգամ է, որ պատրիարքարանը եռանուն ցանկ է կազմում և ուղարկում է Վան, բայց ընտրելի եկեղեցականները իրար յետևից հրաժարվում են և չեն ուզում պաշտօն ստանձնել Վանում։ Սրա պատճառները երկուսն են. նախ այն, որ եկեղեցականները չեն ուզում հրաժարվել Բօսֆորի գեղեցիկ ափերից, իսկ երկրորդ՝ Վանը ճանաչվել է նոր-սերընդական շարժումների բոյն, ուր թայֆայական և կուսակցական ինտրիգներն ընդարձակ ասպարէզ են գտաւել, այնպէս որ լիգալ գործօնների ասպարէզ չէ մնացել կամ շատ է անց կացել, որի մէջ առաջնորդի շարժումները պրկվում են։ Զաւէն վարդապետը, նեղ զգալով իր ասպարէզը Վանում և իր կեանքն էլ վտանգի մէջ տեսնելով, հեռացաւ Վանից, իսկ ուրիշներն էլ չեն համարձակվում պաշտօն ստանձնել Վասպուրականում։

Պատրիարքարանը, տեսնելով որ առաջնորդ. ընտրութիւնը յապաղում է Վանում, տեղապահութեան պաշտօնով նշանակել է Լիմ անապատի փոխ-վանահայր Մակար վարդապետին, բայց Վանի խառն ժողովը, անբաւարար համարելով նրան, մերժեց ընդունել և բաւականանում է Մեսրոպ քահ. Զանիկեանի փոխանորդական պաշտօնով։ Այս քահանան թէև հանեսա կարողութեան տէր, բայց անկեղծ գործիչ է և աւելի արժէ քան մի շարք բօսֆորարնակ վարդապետներ և սրբազաններ, որոնց մէջ պակաս չեն անշահ տիպեր։

Զարդերը նորից շարունակվում են. երկու ամիս առաջ վեց հայեր մորթվեցին Ադիլջևազի գաւառում, որոնց մասին գրել եմ ժամանակին. կարծում էինք, որ այդ վերջինը կը լինի, մանաւանդ որ նրանից յետոյ ստորագրվեց հայ ու-քիւրդ համերաշխութեան թուղթը շէյխ Աբդ-իւլ-Կադերի ղեկավարութեամբ, բայց տեսա դտնվում ենք նոր դիակների, նոր արիւնի առաջ։ Նոյամսի վերջին օրերում Աբաղայի գաւառում սպանվեցին կրկին երեք հայեր, որոնցից մէկը ութ տարեկան մի տղայ էր, որ Վան էր գալիս ընկերների հետ, ուսումնարան մտնելու նպատակով։ Ոճրագործները անյայտ են, իսկ դիակներն էլ դեռ չեն յայտնվել։ Ասում են, որ այս ոճիրը գործել է Հայդերանլը Ալի-բէկը, ի հեճուկս կուսակալին, որի բարեկարգական ջանքերից խրտնելով հեռացել ու ապաստանել է Պարսկաստանում։

Ձմեռայ սկզբում ենք, բայց դեռ ոչ ձիւն ենք տեսել և ոչ ցուրտ, կարծես թէ գարնանային եղանակում լինենք։ Սա մեծ բարեբաղդութիւն է արդէն, և հացի գինը, վառելանիւթը և կեանքի այլ պէտքեր բաւական էժանացել են։ Ժողովուրդը շատ ուրախ է այս բարեբաղդութեան համար։

Մտրակ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

19 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նահանգական դատարանը «Страна» լրագրի խմբագիր Մակսիմ Կովալէվսկիին, մի շարք յօդուածներով զօրքերին վիրաւորելուն և կառավարութեան գործունէութեան մասին ստայօդ տեղեկութիւններ հաղորդելուն համար, ենթարկեց 2 ամսով բանտարկութեան։

Աստրախանի, Սիմբիրսկի, Մինսկի, Մոգիլէվի, Վիտեբսկի, Վիլնայի, Կովնայի, Դրօդնէնի, Լիբլեանդիայի, Սամարայի նահանգները, Սամարա քաղաքը և Պրիմօրեան շրջանը ճանաչվում են խօլերայից ազատ։

ՎՕԼՕԳԴԱ։ Բէլական դպրոցի վերատեսչի բնակարանում գրել էին կեղծ պայթուցիկ նիւթ։ Պայթումից չարդվեցին դասատան պատուհանների ապակիները։

ՕԴԵՍՍԱ։ Նիկոլայիեվեան կողմում 3 դինվածներ ներս խուժեցին քիմիական մթերքների ընկերութեան գրասենեակը և մանվան սպառնալիքով տարան 1400 ր.։

ԼՕՆԴՕՆ։ «Թայմսին» հեռագրում են Պեկինից, որ մաքսատան եկամուտների գումարը այս տարի անցնում է նախկին տարիների եկամուտներից։

Կ. ՊՕԼԻՍ։ Այսօր ռուսական շարժական ցուցահանդէսն այցելեցին 10,000 յաճախորդներ։ Երեկոյեան կը կայանայ խընձոյք ռուսաց դեսպանի մօտ։

ՉԵԼԵԱԲԻՆՍԿ։ (Պատահական)։ Փոխադարձ վարկի ընկերութիւնից յափշտակված փողի արկղը ամբողջը լի գտնվեց։

ԲԵՐԼԻՆ։ Զինուորական նոր «Գրօսս III» օդանաւը 2 անգամ թռիչք կատարեց։ Այս օդանաւը բոլորից աջողն է։

20 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խօլերայով հիւանդ մնացել են 20 հոգի։

Ֆինլանդական գեներալ-նահանգապետը, նահանգապետներին ուղարկած իր հրահանգի մէջ, մատնանշելով որ նրանց հաղորդագրութիւնների մէջ բոլորովին լռութեան են մատնված հասարակական կեանքի վերին աստիճանի կարևոր երևոյթները, ինչպէս օրինակ քաղաքական կուսակցութիւններին, զանազան միութիւնների և ընկերութիւնների ժողովները և նրանց կայացրած վճիռները, խնդրում է հերթական տեղեկութիւնների մէջ ըստ կարելոյն լիովին լուսաբանել հասարակական-քաղաքական կեանքի բոլոր երևոյթները։

ՄՕՍԿՎԱ։ Բացվեց հակա-թոքախտային ցուցահանդէսը։

Խօլերայով հիւանդացողներ չը կան։

ՆՕՎՕՉԵՐԿԱՍԿ։ Վերջացան Դօնեան շրջանի զօրքերի ներկայացուցիչների խորհրդակցութիւնները, որոշում կայացնելով որ Դօնեան զօրքերի շրջանին պատկանող հողերը անձեռնմխելի են։

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ։ Նահանգական դատարանը, քննելով մի խումբ վրացիների գործը, որոնք մեղադրվում էին ռուս-չինական բանկից կեղծ թղթերով 106,800 ռուբլի ստանալու մէջ, եօթ կալվածատէրերին և մանակիցներին դատապարտեց մէկ և կէս տարվայ բանտարկութեան, մէկին՝ իբրև աքսորականի — 2 տարով գործադրանելի աշխատանքներին, երեքին՝ բանտարկութեան 3—8 ամսով, վեց հոգու արդարացրեց։

ՎԻԼՆԱ։ Այրվեցին Պետերբուրգի ժամանաւոր առևտրական բանկի բաժանմունքը և Զակինդի առևտրական տունը։ Փողերը և արժէթղթերը վնասված մնացին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵՑԱՏՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔԻՍ և ԱՂԻՐՆԵՐԻ
հիւանդութիւններ։

Ընդունելութիւն ամեն օր { 12—1 ժ. առաւ. / 5—7 ժ. երեկ.

Միքայէլեան փող., № 36, տ. Ճաւանդիէլի
(օ. մ.) 1216. 101—50

Գայիանէ Արտէմիեվա և Կոստանդին Պետրովիչ Յովհաննիսեանները, Աբշակ Պետրովիչ Մարտիրոսեանցը իր զաւակներով՝ խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինները իրանց սիրելի դստեր, երկրորդը իր անփոխարինելի ամուսնու, իսկ վերջինները իրանց թանգագին մօր՝

Հեղինէ Կոստանդեան ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

վաղաժամ և ծաղկափթիթ հասակում վրա հասած մահը, որ տեղի ունեցաւ Սուխումում, դեկտեմբերի 20-ին։ Թաղումը ԹԵՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱՅՈՒՄ, դեկտեմբերի 27-ին։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԸՆԱՐՕՏԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու. վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ,
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—½—2 ժ. ներքին և երեխայոց հ.
Ց. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ—ատամնաբոյժ—8½—11½ ժ., պլոմբներ և արհեստական ատամներ։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Վճարը 50 կ.։ Հրաւէրները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների։ Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։
Կոչնիեվսկայա փ., № 6, «Վէտցէլ» հիւրանոցի մօտ։ (Ե. Հ. Շ.) 955. 100—37

ՄԵԳԻՑԻՆԱՅԻ
ՖԷԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Յ. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուացումներ (սրինցով.), վէրքի փաթաթումն, դեղերի քսումն (ատիրaնie) հայրն։ Էլեfsրականութիւն ըէվմատիզմի, պարալիչի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ։ Մասսաժ էլեքտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասսաժ։ Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մանաւանդ հմուտ բժիշկների։ Տալիս է այլ և այլ բժշկական-առողջապահական խորհուրդներ։ Դարելի է և գրաւոր, ներփակելով վարձատրութիւն ըստ կարողութեան։ Ընդունելութիւնը 3—4 ժամը։ Семеновская ул., № 9, Վօրօնցօվի կամուրջին մօտ։
(օ. մ.) 857. 0—40

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ներքին և ջղային հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր { առաւօտեան 9—12 ժ.
{ երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 1087. 100—49

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր { առաւօտեան ժ. 12½—2.
{ երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 11—12½.
Հասցէն՝ Սօլօլակ, Բէհրութեան փ., № 33.
(ա. օ.) 1044. 100—55

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւ. ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմեոնովսկայա փ. № 16.
Տելեֆօն № 40.
(Ե. ու. կ.) 984. 100—36

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
յատուկ անունների լիակատար ցանկով։
Գինն է պօստի ծախքով 1 ր.։
Դիմել՝ «Գուտտենբերգ» գրախանութին, Թիֆլիս։
Նոյն տեղը վաճառվում են՝

„Мысли стараго служаки“ Г. Ш.	25 к.
„Этика и матеріалистич. пониманіе исторіи“ Каутскаго	25 к.
„Колонизація Армянъ въ юго-западной Россіи“	20 к.
„Торгово-промышленный справочникъ“	30 к.
„Poètes“ A. Tchobanian	1—50 к.
„Chants populaires Arméniens“ A. Tchobanian	1—50 к.

Գրացուցակը ուղարկվում է ձրի։ Փոքր տեղ կարելի է ուղարկել և պօստի մարկաներ։
1374. 2—1

ОТКРЫТА ПОДПИСКА на **1910** годъ
на ежедневную политическую газету
5 й годъ изданія **РѢЧЬ** 5-й годъ изданія
издаваемую въ С.-Петербургѣ В. Д. Набоковымъ и И. И. Петрункевичемъ
при ближайшемъ участіи П. Н. Милюкова и І. В. Гессена
и при прежнемъ составѣ сотрудниковъ.

Особое вниманіе обращено на отдѣлъ извѣстій изъ провиніи.
(имѣется болѣе ста корреспондентовъ).

ПОДПИСНАЯ ЦѢНА:

	На годъ.	9 мѣс.	6 мѣс.	5 мѣс.	4 мѣс.	3 мѣс.	2 мѣс	мѣс.
Въ Россіи	12 р.—к.	9 р.—к.	6 р.—к.	5р. 10 к.	4 р. 15 к.	3 р. 15 к.	2 р. 15 к.	1 р. 10 к.
За-границу	20 р.—к.	15 р. 75к.	11 р.—,,	9 р. 50 к.	7 р. 75 к.	6 р. —к.	4 р. —к.	2 р.—к.

ЛЬГОТНАЯ ПОДПИСКА
(при непосредственномъ обращеніи въ главную контору:
1) Для сельскихъ учителей, крестьянъ, рабочихъ, фельдшеровъ, приказчиковъ, учащихся въ высшихъ учебныхъ заведеніяхъ подписная цѣна: на 12 м.—9 р., 9 м.—6 р. 75 к., 6 м.—4 р. 50 к., 3 м.—2 р. 40 к. 1 м.—85 к.
2) Служащимъ въ правит., обществен. и торгово-промыш. учрежденіяхъ при коллективной подпискѣ черезъ казначеевъ и дѣлопроизв.—10% скидки.
3) Книгопродавцамъ, киоскамъ, агентамъ и др. посредникамъ по пріему подписки 5% скидки.

Адресъ главной конторы газеты „РѢЧЬ“:
Спб., улица Жуковскаго, 21.
№№ газеты „Рѣчь“ для ознакомленія высылаются безплатно.

(Ե. ու.) 1335. 3—3

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ»—«MESSAGERIES MARITIMES»

29-ին դեկտեմբերի (11-ին յունվարի բստ Ն. տ.) մեկնելու է Բաթումից առաջնակարգ «Danube» շոգենաւը հանդիպելով Տրապիզօն, Սամսօն, Կ. Պոլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն։

Ուղղակի հաղորդակցութեան տոմակները մինչև Պարիզ, Նիւ-Եօրկ և Շանխայ (Չինաստան), Հեռաւոր Արևելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում, պակասեցրած գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, Նախկին Արծրունու գալերէյում՝ թիւ 127 գրասենեակը, հեռախօս թիւ 608։ Գրասենեակը բաց է՝ 9—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, ամեն օր, բացի կիրակի օրերից։
1397. 1—1

Լոյս տեսաւ
ՔԱՂՈՒԱԾՔ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՕՐԻՆԱԳՐՔԻՑ
XI հատորի II մասից
ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ
Արհեստական արգիւնագործ. մասին։
Գինը 60 կոպէկ։
Հասցէն՝ Тифлисъ, Ремесленная Управа.
(օ. մ.) 1349. 3—3

Լոյս տեսաւ
ԴՐԱԴԱՐԱՆ «ԾԻԱԾԱՆ» № 2.
Մարգար
ԳՈՂԸ
(Զինուորի յիշատակարանից)
ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.
Դիմել Թիֆլիսի և Բագուի գրավաճառներին։
Պահեստը՝ Բագու, «Ծիածանի» նախագահ Գ. Պապեանի մօտ այս հասցէով՝ Малая-Морская ул., Русско-Армянская школа.
(Կ. Ե. Հ. Շ.) 1368. 5—2

Արտասահմանից ստացվեցին առաջիկայ տօնական շնորհաւորութիւնների համար
ՊՕՍՏ ԿԱՐՏԵՐ
(Հրատ. Ադրիւ-Տարազի)
1. Վեհափառ Կաթողիկոսն իր շքախմբով։
2. Վեհափառը Անիի թանգարանում։
3. Վեհափառը Ներսիսեան դպրանոցի Նոր շինութեան հիմքն է դնում։
4. Սգազգեստ Հայաստանի Ողին։
Գինը ճանապարհածախսով՝ 100 հատը 6 ր., 50 հատը 3 ր. 50 կ., 25 հատը 2 ր.։
Պատուէրները կատարվում են դրամն ստացված օրը։ Վերադիր վճարով պատուէր չէ ընդունվում։
Դիմել՝ Тифлисъ, „Бюро печати“, Мадатовская № 5.
(Ե.Հ.Կ) 1344. 5—5

Լոյս տեսաւ
ՇԱՀԲԻԱԲԻ
Տասներկու պատմուածք
320 էջ.
Հեղինակի պատկերով.
ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.
Դիմել Թիֆլիսի գրավաճառներին և «Մշակի» խմբագրութեան։
(օ. մ.) 1296. 10—8

«Մշակի» խմբագրութեան մէջ յօդուտ Ադանայի աղէտեալների և հայ որբերի
ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
1) «ՀԱՅՒ ԿՏՈՐ ԶԷՅԹՈՒՆՅՈՒՆ»
Գրական ժողովածու, հրատ. Գր. Զալխուշեանի, գինն է ամենապակասը 3 ր.։
2) «ԳՈՒՆԱՒՈՐ ՄԵԾԱԴԻՐ ՀԱՅ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ
Եապօնական կեանքից, նուիրված Նիկօլսկ քաղաքի հայ լուսանկարիչ Սմբ. Բուզաղեանի կողմից, իւրաքանչիւրը 30 կ. (փոխարէն 60 կօպէկի)։
Այն անձինք, որոնք կամենում են օգնութիւն հասցնել աղէտեալ ազանացիներին, բարի և օգտակար գործ կատարած կը լինեն՝ գնելով այդ գրքերից ու լուսանկարներից բազմաթիւ օրինակներ և նուիրելով ազգային զանազան հաստատութիւնների, ուսումնարանների ու գրադարանների՝ թէ Ռուսաստանում, թէ Պարսկաստանում և թէ Թիւրքիայում։
(օ. մ.) 1352. 10—2

1910 թ. ՀԱՄԱՐ
ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ԳԻՒՂԱՏՆՏԵՍ“
պատկերազարդ շաբաթաթերթի (Բ տարի)
«ԳԻՒՂԱՏՆՏԵՍԻ» բովանդակութիւնը. Երկրագործութիւն։ Անասնաբուծութիւն և կաթնատնտեսութիւն։ Պարտիզպանութիւն և պտղաբուծութիւն։ Այգեգործութիւն և գինեգործութիւն։ Ցանուկ բոյսերի մշակութիւն։ Մեղուաբուծութիւն և շերամապահութիւն։ Բանջարաբուծութիւն։ Թռչնապահութիւն։ Կօօպերացիա և սպառողական ընկերութիւններ։ Գիւղատնտեսական նորութիւններ։ Գիւղատնտեսական կեանք։ Գրախօսութիւններ։ Թղթակցութիւններ։ Տնայնագործութիւն և տնարարութիւն։ Հարց և պատասխաններ։ Գօսա-արկղ և յայտարարութիւններ։
Առաջիկայ 1910 թուին «Գիւղատնտեսին» աշխատակցելու են նաև թիւրքահայ գիւղատնտեսներ։
«Գիւղատնտեսը» 1910 թուի իր տարեկան բաժանորդներին թերթի համարներից դուրս տալու է որպէս նուէր՝
ՀԱՅԱՐՈՅՑԵՐԻ ԵՒ ԽՈՏԱԲՈՅՑԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՍԵՐՄԵՐ
Բաժանելին.

Ռուսաստանում		Արտասահմանում	
Տարին	3 ռուբլի	Տարին	4 ռուբլի (12 ֆրանկ)
Կէս տարին	2 ռուբլի	Կէս տարին	2 ր. 50 կ. (7 ֆրանկ)

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Гюхатнтесъ“. Արտասահմանից՝ Tiflis (Russie) Rédaction «Guchatntess».
(Կ. Հ.) 1179. 24—14

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առևտրական, գործատնական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց, գործնական ձեով հաշուապահութիւն և ուրիշ մասնագ. առարկաներ 4 ամսվայ ընթացքում։
Կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվում են սեպտեմբեր ամսից ստար լեզուներ և սղագրութիւն (стенографія) ըստ ցանկութեան և որոշ վճարով։
Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։ Պարապմունքները սկսվելու են 1910 թ. յունվարի 15-ից պարբերաբար ամեն 4 տիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագրերն ուղարկվում է ձրի։
Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատեստատներ։
Դրանից անկախ՝ բացված են քիչ պատրաստական ունակութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր առևտաց լեզուի և թւաբանութեան համար։
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну. Николаевская ул. № 22, Телефонъ № 744.
Վերևում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կ.։
(Կ. Ե. Հ.) 1331. 13—5

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1910 թ.
„ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“
(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)
Գրական, հաղարական, հասարակական եւ առեւտրա-արդիւնաբերական
ԼՐԱԳԻՐ
Լոյս է տեսնում առժամանակ
ՇԱԲԱԹԸ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ
Հոգեբշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը
Մօտիկ աշխատակցութեամբ Դ. ԱՂԱՅԵԱՆԻ և ՆԱՐ-ԴՈՍԻ
«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» բաժանորդները կարող են ստանալ «ԽԱԹԱԲԱԼԱ» երգիծաբանական շաբաթաթերթը պակաս վճարով։
ԲԱԺՆԵՎՃԱՐՆԷ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ (Առանձին)		ԽԱԹԱԲԱԼԱ (Առանձին)	
Տարեկան	7 —	Տարեկան Թիֆլիսում	4 ր., դուրսը 5 ր.։
Կէս տարին	4 —	Կէս տ. »	2 ր., » 3 ր.։
Երեք ամիսը	2 25	3 ամս. Թիֆլիսում և դուրսը	1 ր. 50 կ.։
Մէկ ամիսը	— 75	Մէկ ամիսը	— 50 կ.։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ և ԽԱԹԱԲԱԼԱ
(Միասին)

Տարեկան	10 — —	Երեք ամիսը	3 — 50
Կէս տարին	6 — —	Մէկ ամիսը	1 — 20

«Սուրհանդակում» յայտարարութիւնների համար վճարում են տողին՝ առաջին երեսի վրա—10 կօպէկ, վերջին երեսի վրա—5 կօպէկ։
Հատով «Սուրհանդակի») համարն արժէ ամեն տեղ 5 կօպէկ։
Հասցէն Ռուսաստանի համար՝ Тифлисъ, редакція газ. „Сурандакъ“. Արտասահմանի համար՝ Tiflis, Rédaction du journal „Surhandak“.
Հրատարակիչ՝ Գեորգ Չիլինգարեան — Խմբագիր-հրատ. Աստ. Երիցեան
(ա. օ.) 1348. 10—3

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ
Ի նկատի ունենալով, որ վաճառքի է հանված առողջութեան համար ՇՔԱՍԱԿԱՐ կեղծ Սպերմին, որ առաջարկվում է զանազան անունների տակ, անհրաժեշտ է գնելու ժամանակ ուշադրութիւն դարձնել հետևեալ անուան վրա՝
ՍՊԵՐՄԻՆՊԷԼԻ
ՊՐՕՖԷՍՍՕՐ-ԴՕԿՏՕՐ
SPERMINUM POEHL 1901
և պահանջել այդպիսին Գործարանաբուժական ձեռարանի իսկական կապոցի մէջ,
ՊՐՕՖԵՍՍՕՐ-ԴՕԿՏՕՐ ՊԷԼԻ և ՈՐԴԻՔ, ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
Ռուսական և արտասահմանեան գրականութեան մէջ եղած բազմաթիւ գիտական դիտողութիւնները առաջնակարգ գիտնականների և բժիշկների կողմից՝ Սպերմինի փրկարար ներգործութեան մասին—նեվրասթենիա, սեռական թուլութիւն, ծերութիւն, իստերիա, նեվրալգիա, արեան պակասութիւն, թոխաs, սիֆիլիս, սնդիկային բժշկութեան հետեւանքներ, յօդացաւ, ստի հիւանդութիւններ (չանեվրալգիա, զուրթիւն, սրտի պնդախտութիւն, սրտի բարախու�, պերեբոյ, միօկարդիտ), զարկերակի կարծրացումն, ալկոհոլիզմ, ողնաշարի հիւանդութիւն, կաթուածներ, հիւանդութիւններից թուլացումն, յոգնածութիւն և այլ հիւանդութիւններ ունեցած ժամանակ—
ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ԲԱՑԱՌԱՊԷՍ ՊՐՕՖ.-ԴՕԿՏ. ՊԷԼԻ ՍՊԵՐՄԻՆԻՆ։
Պէլի Սպերմինը գտնվում է բոլոր դեղատներում և դեղատնային խանութներում. 1) կաթիլների ձևով (Essentia spermini—Poehl), 1 սրսուակը—3 ր., և նոյնպէս՝ 2 ամպուլների մէջ մորթու տակ սրսկելու համար (Sperminum-Poehl pro injectione), 1 արկղիկը—4 անգամ սրսկելու համար—3 ր. և 3) կլիզմի համար (Sperminum-Poehl pro clysm), 1 արկղիկը—4 կլիզմի համար—3 բուբլի։
Շրջաբաս ուղարկվում է „Целебное дѣйствіе Спермина-Пеля“ գիրքը 102 էջ. որ պարունակում է ռուս և այլազգի բժիշկների դիտողութիւնները, նոյնպէս և „Органотерапевтическій Сборникъ“ երկրորդ հրատար. գիրքը՝ պրոֆէսսոր-դոկ. Պէլի ցուցմունքներով գործարանային ուրիշ կապ. վերաբերմամբ։—Հոս պահանջման պ. պ. բժիշկների ուղարկվում է գիտական յատուկ գրականութիւն։
Органотерапевтическій институтъ, химическая лабораторія и аптека
Профессора Доктора ПЕЛЯ и Сыновей
въ С.-ПЕТЕРБУРГѢ. Вас. Остр., 7 линія. д. 18—267.
Ամենախոշոր մրցանակներ «Grand Prix» աշխարհիս բոլոր ցուցահանդէսներում և ամենալաւ գովասանքներ բժշկականութեան մէջ գործող հեղ. անձերի։
(II. 108276) 720. 8—8

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми.